## ՌՈՇՔԵԱՆ

*Բառեր որ կան միայն իր քով*

ԱԲԲԱՆԱՑ. ի. իւ. Ցանաց, բարձր. էր սեղան կոյս։ Եզեկ. Ի. «Զինչ է աբբանայդ այդ, յոր դուք մտանէք»։

ԱԲԵՂԱՆՈՑ. վանք աբեղայից. Cœnobium, bii. «Թողեալ զաշխարհ եմուտ յաբեղանոց» Պատ. Հայ։

ԱԲՐԱՅ. ի. իւ, Ցուն. աղախին, Abra, e. f.

ԱԳԵԿԱԼ. ի. աւ։ Հատ փոքր կախեալ ի թամբէն որ ի ներքոյ ագւոյ դնի ձիոյն. Postilena. իսկ որ առաջի կրծից ձիոյ դնի կրծակալ ասի. Antilena. Աշխ. ձգ. «Ձիաւորն զարդարէ զձին ճակատացաւ, կրծակալաւ և ագեկալաւն»։

ԱԳՈՆԱՎԱՐ. ի. աւ։ Որ յագոնին նահատակէ. Agonista. «Ագոնավարն Տրդատ մեհազօյն այլոց զատու». Պատ. Հայ։

ԱԳՈՆԱՐԱՆ. տե՛ս մրցարան։

ԱԳՈԽՈԽԵԼԻ. ւոյ։ Որ դիւրաւ ագուցի. Congregabilis, le. Amplectendus, a. m. «Եւ նստեալ ի տեղւոջ ագուցելի կարգային զգիրն ամենեցուն» Եզր. գ.։

ԱԳՈԽՈԽԵՄ. եաց Ագուցով առնում, ժողովեմ, կալնում. ուստի ողջագուրեմ. Congrego, Carpo, is, Involo, as. «Ամբաստ զերկիրն ագուցեաց Մարաց»․ Մեսր. պատ.։

ԱԳՈԽՈԽՈՒՄՆ, ման։ Գործ ագուցելոյ. Carptus, ûs, m. Carpura, e. f. «Պատկոյ ագուցմամբ ելից զբակս»։ Մես. պ.։

. . . . . . . . . . . . .

ԱՅԳՈՐԵԼԻ. Սխալ է. տե՛ս Ագուցելի։

. . . . . . . . . . . . .

ԼԱԼԱԳՆԱԲԱՐ. մկ. flebiliter. «Ապաղատանօք լալագնաբար, զգութ շարժեա զորովմարար». Տաղ։

ԼԱԼԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Լալին լալականաց. «Զլալականութիւն անձին ի վերայ նորա». Մատ. պատ։

ԼԱԼԱԿՑԻՄ, իս. ի միասին լամ. apploro. «Լալակցին իւրեօք, ողբակցին թաղծանօք». Տաղ ննջ.։

ԼԱՅՆԱԲԱՑ, ի. աւ. Ցայտնապէս բացեալ. late patens. «Զլայնաբացանկութիւն կոկորդին լնուլ»։ (Դաւ. Սահ?)։

ԼԱՅՆԱԳԻՆ. գնիւ. Յոյժ. լայն. perlargus. a. m. «Զի լայնագին է կորստեան ճանապարհն». Եփրեմ ազ.։

. . . . . . . . . . . . .

ԼԱՇԻՄ, իս. եցի։ Մաշիմ. «Լաշեցան ոսկր իմ ի շատ շրջելոյ» (Քազ.?)։

ԼԱՊԱՏ. ի. աւ։ Խոտ թթուահամ, ստամոքսի յոյժ օգուտ. Աւելուկ (?) հայք ասեն. Lapathumi, եան։

## ՀԱՅԿԱԶԵԱՆ
## ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՀՕՐ

*Բառեր որ չկան Ռուշքեանի քով*

ԱԲԱՆՈՍ. ի, իւ, ալ, օք.։ Նոր Հայկազեան Երեննոս բառին տակ, իսկ Ռուշքեան Ոմնիտազ բառին տակ դրած են։

ԱԲԻՈՆ, ի, աւ, ալ, օք։ Տես ափիոն։ Գործել բառ որում է սա բառ յունական, նշանակէ աղքատ կամ չքաւոր, և կամ անստացուած։ Տաճկերէն փախիր կամ ֆուխարէ։

ԱԳԱՀԱԿԱՄ. ի, իւ, ալ, օք։ Նա որոյ կամքն թեքեալ և յօժարեալ է առ ագահութիւն. կամ սիրող ագահութեան։

ԱԳԱՀԱՍԻՐՏ, սրտի, իւ, իւ, իւք։ Ունող զսիրտ ագահ, կամ յօժարեալ յագահութիւն։

ԱԳԱՆՈՎԹ. կամ ագանօթ. թայ, աւ, ալ, օք։ Է բառ եբրայական և նշանակէ զերաժշտական գործիս. և ըստ այսմ ագանովթ կոչին ամենայն նուագարանք. նաև գործիքն, որով հարկանեն զայսպիսի նուագարանս։ Ռմկ. սազ, կամ քաղէնէ. կամ սազ զարնելու չըպուխ։ Եսայ. 22, 24։

ԱԳՈՐ. ի, աւ, ալ, օք։ Պահապան. կամ վերակացու և կամ պաշտպան։ Ռամկ. պէքճի կամ կեօզճի։

ԱԳՈՒՑԻԿ. ցկի, աւ, ալ, օք։ Ագուցանող կամ զգեցուցանող, և մերթ ի միմեանս մուծանող, Ռամկ. հագցնող. կամ կիյաւիրմիշ ընող, ևն։

. . . . . . . . . . . . .

ԼԱԳՈՒԹԻՒՆ, եան։ Պագշոտութիւն, կամ վավաշոտութիւն, կամ ճակաճանութիւն, ևն...։

ԼԱԳՈՒՑԱՆԵՄ. կամ Լաքուցանեմ, ուցի. (անցող.). ծածկել կամ թաքուցանել։

ԼԱՁԱՆԻ. նւոյ. եաւ, եաց, եօք։ Է փոքրիկ կենդանի մի յոյժ գազանաբարոյ. ի գազանութենէ որոյ գրեթէ ամենայն գազանքն երկնչին, նաև ինքն առիւծն։

ԼԱԼՕՔ. Եղանէ սա ի լալ բառէս իբրև զգործիական նորա, և նշանակէ լալովք, այսինքն լացիւք կամ ողբալով։ Երեմ. 45. 5։

ԼԱՓԼԻՁՈՂ. ի, աւ, ալ, օք։ Լափելով ըմպող. և այս առի զգազանաց, որք լափեն զարիւն, և նովաւ իւր կերակրով պարարին. և այսպիսի է կուզ գազանն, որ ի կալնուլն զհաւն ծծէ զարիւնն, և ի բաց թողու զմիսն. ըստ այսմ ասեն և զայլոց ամանց գազանաց։ Նարեկ. ժ.։

---

## ՆՈՐ ՀԱՅԿԱԶԵԱՆ
(*Երից վարդապետաց*)

*Բառեր որ չկան Ռուշքեանի քով*

ԱԲԻՈՆ Աբիոնացի. բառ եբր. աղքատ յն. ἄπορος, πένης. աղքատ. Հին բռ.։ Տես անանկ։ «Աբիոնն աղքատ կոչի ի լեզու հեբրայեցի... Զնոսա (զԵբիոնիտ աղանդաւորս) առաջինքն յիրաւի կոչեն զաբիոնացիս, փոխանակ զի աղքատաբար և տկարաբար ունէին նոքա զՔս. Եւսեբ. Պատմ. գ. 27։

ՍԲՈՆ կամ ԱԲԲՈՆ. Ողջոյն (որպէս թէ ասելով ըստ սուրբ. և արաբ. Ապը՛նա, հայր մեր. կամ լտ. Ա՛վէ. հյ. Աւետիք)։ «Հայրն Ոմր ոչ երբեք յառաջէր, և տայր աբբոն ումեք. Եա ինձ աբոն. Վրք. Հց. ձ.։

ԱԳԱՆՈՎԹ այ. գ. Եբր. տկկանօթ. յոգնականն բառիս տկկան. այն է աման հեղանիւթից։ Եա. կբ. 24։ Յայլ տեղիս դնի թակոյկ, խառնելիք։

ԱԳԱՐԱԿԱՑԻՆ, նոյ, ոց. պատաշաճեալ ինչ ագարակի, ևն։ «Սահման առի ի փոխարերութենէ գիւղից, և ագարակային սահմանաց». Սահմ. դ.։

ԱԳԱՐԱԿԱՆԱԼ, որպէս ագարակ լինել, կամ անշէն մնալ։ «Ագարակն քաղաքացեալ էր, և քաղաքն ագարակացեալ». Մամբր. ի Դզր.։

ԱԳԱՐԱԿԻԿ փոքր կամ անպիտան ագարակ, անդ փոքրիկ։ «Փոքրիկ ագարակիկ մի ի Փռիւգիա. Կոչ. ժգ. «Նուաստ ագարակիկ մի». Տօնակ։

ԱԳԱԽՈՐԵՄ. Իրր. այգաւորեմ. տե՛ս այգորել։

ԱԳԵՏԱԿ. կամ ագէտակ. ներքոյք ագւոյ կենդանւոյն. Վստկ.։

ԱԳԵԽՈՐԵՄ. այգաւորել. տե՛ս այգորել։

ԱԳՈՆԱՐԱՐ. ի. աց. Ἀγωνιζόμενος, certans in agone. որ առնէ զագոն, այսինքն որ հանդիսանայ ի մրցմունս. ախոյեան, նահատակ. «Ա՛ռ այսու ժամանակօք ագոնարարացն տրագոս տուաւ, որ է զօշ». Եւսեբ. քր. բ.։

ԱԳՈՆԻՍՏԱՅՔ, այց. գ. Ἀγωνισταί. Certatores. Մրցողք, դէմընդէմ ոսոխք ի խաղս ագոնի. «Ագոնիստայքն աթղեստայք կոչէին. Եւսեբ. քր. ա.։

ԱԳՈՐԱՆՔ. գ. Մթերք աղբեւաց. Հին բառ։

ԱԳՈԽՈ. (ձեռքի ափը նշանակութեամբ կայ Ռուշքեանի քով, բայց ոչ երկրորդ նշանակութեամբ՝ որ է պինդ, անբեկանելի, կուռ, կամ պիրտ, ակիշտ, ա՛ղիս թրծեալ. «Աղիս թրծեալ հրով ագուռ՝ կայցէ ի ջրի քան զքար։ Վրք. Հց. ժգ.։

ԱԳՈՒՑԻԿ. ա. Ագուցեալ պնդապէս յայլ ինչ. խարամուխ մածեալ. «Ագուցիկ մթերին խորհուրդք չարութեան». Մծբ. ծթ.։